

## ➤ **Ժ.-Ժ. Ռուսո**

Ֆրանսական Լուսաւորութեան դարաշրջանի նշանաւոր փիլիսոփաներէն Ռուսո, նաեւ հանրաձանօթ գրող եւ մանկավարժ-դաստիարակ էր:

Ռուսոյի փիլիսոփայութեան գլխաւոր հիմքը կը կազմէ իր *ազատութեան* գաղափարը, որ առնչուած է մարդու *բնական* վիճակին հետ: Ռուսոյի համաձայն, քաղաքակրթութիւններու (գիտութիւն, մշակոյթ, ընկերութիւն) զարգացումը, կը հեռացնէ մարդը իր բնական վիճակէն, պատճառ կը դառնայ անոր ազատութեան կաշկանդումին եւ չի նպաստեր մարդոց բարոյակա-նութեան եւ հաւասարութեան: Քաղաքակրթութեան զարգացման առաջին հարուածը, Ռուսոյի համաձայն, կու գայ աշխատանքի բաժանման եւ սեփա-կանութեան գաղափարի կիրարկումով, որոնք մարդը կը մղեն դէպի մրցակ-ցութեան պայքար, իր զանազան միջոցներով եւ լուրջ հետեւանքներով: Ասոր կողքին, քաղաքակրթութիւնը կը ստրկացնէ բանուոր-աղքատ դասակարգը եւ կը զօրացնէ իշխող-հարուստ դասակարգը, դուռ բանալով ընկերային ան-հաւասարութեան:

Մարդու ազատութեան վրայ վերոյիշեալ բացասական ազդեցութիւններուն դէմ, Ռուսո, ցոյց կու տայ ազատութիւնը վերագտնելու երկու ուղիներ. **առաջինը՝** դաստիարակութեան իտեալն է, որով հարկ է պաշտպանել մանուկը ընկերութեան վատ ազդեցութիւններուն դէմ: Այս մասին, Ռուսո, 1762 թուականին գրած է «*Էմիլ կամ դաստիարակութեան մասին*» երկը (ֆրնս. բնագիր՝ „Émile, ou de l' éducation“): Իսկ **երկրորդը՝** անհատի ենթարկութիւնն է *հանրային կամքին* (volonté générale), որուն մաս կը կազմէ նաեւ ի՛ր կամքը: Այս մասին, Ռուսո, 1762 թուականին գրած է «*Ընկերային պայմանագիր*»ը (ֆրնս. բնագիր՝ „Du contrat social“), ուր կարելի է գտնել արդիական ժողովրդավարութեան (Democracy) սկզբնական գաղափարները:



## **2. ԿԱՆՏ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ**

Եթէ *գաղափարապաշտութիւնը* (Idealism) սկիզբ առաւ Հնադարեան ժամանակաշրջանին, Պլատոնի մօտ, ապա Նոր Դարաշրջանի 18-րդ եւ 19-րդ դարերուն դարձեալ կարեւորութիւն պիտի ստանար Գերմանիոյ մէջ եւ որպէս փիլիսոփայական ուղի պիտի ստանար *գերման գաղափարապաշտութիւն* (German Idealism) անուանումը:

Ըստ գաղափարապաշտ փիլիսոփայութեան, աշխարհի Էութիւնը ոչ թէ անոր նիւթական կառոյցին մէջ է, այլ՝ բանականութեան մէջ տեղ գտած նիւթի գաղափարին. այլ խօսքով գաղափարներու աշխարհը կը դասուի առաջնահերթ, իսկ տեսանելի, շօշափելի կամ զգալի աշխարհը, կը նկատուի միայն որպէս երեւոյթ:

Գերմանական գաղափարապաշտութեան ուղին պատրաստող փիլիսո-